

*«Հայկական ժամանակ» օրաթերթի
ս/ք դեկտեմբերի 8-ի համարի`
«Հին և նոր ընտրություններ»
հրատարակման կապակցությամբ*

Թվում է՝ հողվածագիրը քաջատեղյակ է թե՛ քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձություններին, թե՛ ընտրական գործընթացներին և թե չէ ընտրական օրենսգրքին: Այնուամենայնիվ, սխալ վերլուծության պատճառով այս անգամ թյուրիմացության մեջ կարող են հայտնվել ոչ միայն ընթերցողը, այլև Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիները:

Խոսելով թեկնածու առաջադրված քաղաքացիներից մեկի մասին՝ հեղինակը կամայական մեկնաբանության է ենթարկում ՀՀ ընտրական օրենսգրքի որոշ հոդվածներ՝ գրելով. «Նա, մինչև քվեարկությունից 10 օր առաջ կարող է առանց ավելորդ ծախսերի շարունակել մնալ նախագահի թեկնածու: Բանն այն է, որ եթե առաջադրված թեկնածուն թվեարկությունից մինչև 10 օր առաջ ինքնաբացարկ է ներկայացնում, ապա նրա նախընտրական 8 միլիոն դրամի գրավը վերադարձվում է»:

Հեղինակի կողմից արված վերլուծությունը, մեղմ ասած, հեռու է իրականությունից: ՀՀ ընտրական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն Հանրապետության Նախագահի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու դեպքում, իսկ ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու պարագայում թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, ընտրական գրավի գումարը, նաև նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները, փոխանցվում են պետական բյուջե: Ավելին, ՀՀ ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն քվեարկությունից մինչև 10 օր առաջ ինքնաբացարկ ներկայացնելու դեպքում թեկնածուն պարտավոր է նաև հատուցել իր առաջադրման և նախընտրական քարոզչության համար պետության կողմից կատարած ֆինանսական ծախսերը:

S. Օհանյան